ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2026 թվականի N 597 - Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 57-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ծավ բնակավայրի կրթա-համալիրի կառուցման նպատակով 2024 թվականի օգոստոսի 22-ին «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ի հետ կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների գնման N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/68 պայմանագրի շրջանակներում համաձայնագիր կնքելու նպատակով՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրը «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ին տրամադրել նոր ծանուցում՝ կապալառուի կողմից ապահովումների ներ-կայացման համար սահմանելով նոր ժամկետ՝ մինչև 2026 թվականի հունիսի 1-ը:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին՝ սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամկետում «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ի կողմից ապահովումներ չներկայացվելու

դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը միակողմանիորեն լուծել:

3. Սահմանել, որ սույն որոշման գործողությունը տարածվում է 2026 թվականի փետրվարի 18-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ